ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

19.06.2013թ.
201-ի 9

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Մեզ են դիմել ք. Երեւան, Արգիշտի 11/3 շենքի բնակիչները եւ խնդրել են իրենց օգնել տեղեկատվություն ստանալու հարցում:

Ք. Երեւան, Արգիշտի 11/3 շենքի մուտքերում թեեւ առկա է թեքահարթակ, սակայն դրանից օգտվելն անհնար է, քանի որ թեքահարթակը կառուցված է մեծ թեքությամբ՝ մեծ անկյան տակ, բացի այդ թեքահարթակը չափազանց լայն է, չի համապատասխանում մանկական սայլակների անիվների լայնությանը, ուստի շենքի բնակիչները դրանից փաստորեն չեն կարողանում օգտվել:

Բացի այդ, Արգիշտի 11/3 եւ հարակից շենքերի բակում՝ ամբողջ թաղամասում չկա մանկական խաղահրապարակ, այնինչ շենքերում բավական շատ են երիտասարդ ընտանիքները՝ փոքր երեխաներով:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւվս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Նախատեսվու՞մ է արդյոք ք. Երեւան, Արգիշտի 11/3 շենքի եւ հարակից շենքերի բակերում կառուցել խաղահրապարակներ երեխաների համար:
2. Եթե այո, ապա ե՞րբ, եթե ոչ, ապա ինչու՞:
3. Խնդրում ենք միջոցներ ձեռնարկել, Արգիշտի 11/3 շենքի մուտքերի թեքահարթակները շինարարական նորմերին համապատասխան վերակառուցելու համար:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան